# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 11/15

«11» 01 2019թ.

Ձեր

<<Վիլարդ Պողոսյան Միերի>> Ա/Ձ
տնօրեն՝ Վիլարդ Պողոսյան
հասցե՝ Ք. Գորիս, Արևշատ 2/17
էլ.հասցե՝ vilard.poghosyan@yandex.ru

Հարգելի պարոն Պողոսյան

ՀՀ ոստիկանության /այսուհետ Գնորդ/ և <<Վիլարդ Պողոսյան Միերի>> Ա/Ձ –ի /այսուհետ Վաճառող/ միջև 16.11.2018թ, կնքված N ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2018/ԾՈ/Ա-2 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումն իրականացնել պայմանագրի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համաձայն:

Սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն ընկերության կողմից մատակարարում չի իրականացվել:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը ՀՀ ոստիկանությունը 2019թ. Հունվարի 10-ից միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը, որի արժեքը կազմում է 133000 (մեկ հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ:

Միաժամանակ, հիմք ընդունելով Ձեր կեղմից ներկայացված պայմանագրի կատարման ապահովման 1.3 կետը, տեղեկացնում ենք, որ ՀՀ ՖՆ գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է փոխանցման 13 300 (տասներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ որպես պայմանագրի կատարման ապահովման գումար:

**Հարգանքով՝**

**Ոստիկանության գնդապետ** **Վարդան Մովսիսյան**